ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 10 >> << Մարտ >> 2020թ. N ՄՊ/75-2020

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆՈՐ ԱՄՐԱՑՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 31-Ի N 292 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, <<Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի հաշվեկշռում հաշվառված տրանսպորտային միջոցների օգտագործումը պատշաճ կազմակերպելու նպատակով.

որոշում եմ՝

1. Իրականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի հաշվեկշռում հաշվառված ծառայողական ավտոմեքենաների նոր ամրացումներ՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2018 թվականի օգոստոսի 31-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ծառայողական ավտոմեքենաների ամրացումներ իրականացնելու մասին>> N292 որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ *Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ*

Invalid signature

X

VERIFIED OCSP 3/10/2020 16:33:01 GMT+4

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2020 թվականի մարտի 10-ի
N Մ92/Հ5-2020 որոշման

ՆՈՐ ԱՄՐԱՑՈՒՄՆԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին՝ 2012 թվականի արտադրության TOYOTA LC 150 2.7 GAS 055LL55 պետհամարանիշով ավտոմեքենա (պատասխանատու՝ Խաչիկ Ինջյան).
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի հաշվեկշռում գտնվող՝ 2006 թվականի արտադրության NISSAN PATHFINDER 876LL11 պետհամարանիշով հերթապահ ծառայողական ավտոմեքենա (պատասխանատու՝ Կարեն Գրիգորյան).
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի հաշվեկշռում գտնվող՝ 2008 թվականի արտադրության DAEWOO MATIZ M 08 252LS28 պետհամարանիշով հերթապահ ծառայողական ավտոմեքենա (պատասխանատու՝ Գեղամ Իսկանդարյան).
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի հաշվեկշռում գտնվող՝ 2008 թվականի արտադրության NISSAN TIDA 638LL70 պետհամարանիշով հերթապահ ծառայողական ավտոմեքենա (պատասխանատու՝ Հայկ Պողոսյան).

Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝ ***Վ. Վարդազարյան***

Недействительная подпись

VERIFIED OCSP 10.03.2020 16:25:42 GMT+4

Подписано: VARDAZARYAN VARDAN 1704780217